ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/210

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.07.2021թ. թիվ 26/26-111661-2021 գրությամբ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 14.07.2021թ. թիվ 01/61-16550 գրության հիման վրա, 20.07.2021թ. թիվ 26/26-111661-2021 գրությամբ նախաձեռնել է «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ձեր վարույթ է փոխանցվել «Մ. Բուատ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից նաևաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/191 ծածկագրով ընթացակարգը: Հաշվի առնելով, որ նախկինում մեր դիրքորոշումը ներկայացրել էինք բանավոր, սույնով այն ներկայացնում ենք գրավոր տեսքով:

- Ընթացակարգի վերաբերյալ փաստերը.

- Երևան քաղաքի Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների մայրուղիների և փողոցների վերակառուցման և հիմանորոգման աշխատանքների կատարման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-31 ծածկագրով գնման ընթացակարգ:

- Վերոնշված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մ. Բուատ» ՍՊԸ-ն:

- Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2021թ. ժամը 10:00- ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ 1-ին չափաբաժնի մասով որոշվել է ընտրված մասնակից ճանաչել «Մ. Բուատ» ՍՊԸ-ին:

- 21.06.2021թ. Պատվիրատուի կողմից ուղարկված պայմանագրի նախագիծը «Մ. Բուատ» ՍՊ ընկերությունը չի ստացել:

- Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2021թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 որոշվել է «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք անձանց ցուցակում ներառելու համար դիմել լիազորված մարմնին՝ պայմանագիրը չստորագրելու հիմքով:

- 14.07.2021թ. թիվ 01/61-16550 գրությամբ Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատարին՝ «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:

- 20.07.2021թ. Ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետը դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն

Օհանյանին «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու համար:

Իրավական և հիմնավորումները

1. Սույն ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած դիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Պատվիրատուն դիմել է լիազորված մարմնին, հիմքում դնելով «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը (հիմք՝ 14.07.2021թ. թիվ 01/61-16550 գրություն):

«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածը 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում է.

«2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:»

Մեջբերված իրավանորմից ակնհայտ է դառնում, որ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, իսկ մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ստորագրել պայմանագիրը, հակառակ զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Հարկ է ընդգծել նաև, որ մասնակցի մոտ պայմանագիրը սահմանված ժամկետում ստորագրելու պարտականությունը ծագում է (10 աշխատանքային օրյա ժամկետը սկսում է հոսալ, Պատվիրատուի կողմից իր (պայմանագրի նախագիծը ներկայացնելու) պարտականությունը կատարելուց հետո միայն, իսկ ավելի կոնկրետ՝ մասնակցի կողմից պայմանագրի նախագիծը փաստացի ստանալուց հետո: Այսինքն,

մասնակցի պայմանագիրը ստորագրելու պարտականությունը և ժամկետը սկսում է հոսել պայմանագիրը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրից:

Սույն ընթացակարգի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Պատվիրատուն ներկայացրել է համապատասխան ապացույց Armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Ընկերությանը պայմանագրի նախագիծը 21.06.2021թ. ուղարկելու վերաբերյալ: Սակայն Պատվիրատուի ներկայացրած ապացույցի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ վերջինս պայմանագրի նախագիծը ուղարկել է էլեկտրոնային փոստի ոչ ճիշտ հասցեով, մասնավորապես Ընկերությանը պատկանող m.buat@bk.ru էլեկտրոնային փոստի հասցեի փոխարեն գրված է mbuat@yandex.ru, որը Ընկերությանը չի պատկանում: Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ Ընկերությունը ընթացակարգի հայտում ևս նշել էր m.buat@bk.ru էլեկտրոնային փոստի հասցեն:

Հաշվի առնելով, որ Պատվիրատուի ներկայացրած ապացույցի մեջ նշված է Ընկերության նախկին տնօրենի անունը, որը հանդիսանում էր օգտվող, ստուգել ենք www. armeps.am կայքում (ԱՐՄԵՊՍ համակարգում) համապատասխան էջում առկա Ընկերության տվյալները: Ստուգման արդյունքում պարզել ենք, որ բոլոր տեղերում լրացված է ճիշտ էլեկտրոնային փոստի հասցե: Նշվածի վերաբերյալ սույնին կից ներկայացնում եմ www. armeps.am կայքից արտատպված նկար և վիդեո ֆայլ:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ Պատվիրատուի կողմից 21.06.2021թ. ուղարկված պայմանագրի նախագիծը Ընկերությունը չի ստացել, ինչը պայմանավորված է եղել էլեկտրոնային փոստի սխալ հասցեի ուղարկված լինելու հանգամանքով: Նման պայմաններում, պետք է փաստել, որ Ընկերության մոտ չի ծագել պայմանագիրը ստորագրելու պարտավորությունը և չի սկսել հոսալ սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետը, հետևաբար Ընկերությունը չի կարող իր համար չծագած պարտավորությունը չկատարելու համար կրել պատասխանատվություն, այն է՝ ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Ամփոփելով սույն դիրքորոշումը գտնում եմ, որ ներկայացված փաստերի ուժով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու ՀՀ ֆինանսների նախարարության դիմումը պետք է մերժել: Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներով խնդրում եմ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.07.2021թ. գրությամբ «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ՍՑ-ԼՕ-2021/191 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/210 ընթացակարգի շրջանակներում 03.09.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.07.2021թ. թիվ 01/61-16550 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 25.05.2021 թվականին հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31 ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասանակցության հայտ է ներկայացրել «Մ. Բուատ» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 21.06.2021 թվականին Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31 ծածկագրով պայմանագիրը և վերը նշված ապահովումները: Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/210 ընթացակարգի շրջանակներում 03.09.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/210 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/210 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով Ընկերության հետ կնքել պայմանագիր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 21.06.2021թ. ծանուցել է «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի mbuat@yandex.ru էլ. հասցեին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 21.06.2021թ. «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին ներկայացվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել և որոշում է կայացրել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.07.2021թ. թիվ 26/26-111661-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 14.07.2021թ. թիվ 01/61-16550 գրությունը՝ կից

փաստաթղթերով, «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի 30.08.2021թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ***<u>պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին</u>***՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին <u>ծանուցումը</u> և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով Ընկերության հետ կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 21.06.2021թ. ծանուցել է «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի

mbuat@yandex.ru էլ. հասցեին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 21.06.2021թ. «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին ներկայացվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել և որոշում է կայացրել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը, միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ՍՑ-ՆԳ-2021/210 ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը. «Սույն ընթացակարգի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Պատվիրատուն ներկայացրել է համապատասխան ապացույց Armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Ընկերությանը պայմանագրի նախագիծը 21.06.2021թ. ուղարկելու վերաբերյալ: Սակայն Պատվիրատուի ներկայացրած ապացույցի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ վերջինս պայմանագրի նախագիծը ուղարկել է էլեկտրոնային փոստի ոչ ճիշտ հասցեով, մասնավորապես Ընկերությանը պատկանող m.buat@bk.ru էլեկտրոնային փոստի հասցեի փոխարեն գրված է mbuat@yandex.ru, որը Ընկերությանը չի պատկանում: Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ Ընկերությունը ընթացակարգի հայտում ևս նշել էր m.buat@bk.ru էլեկտրոնային փոստի հասցեն»:

Այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 16.08.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/13025-2021 գրությամբ դիմել է «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ին հայտնելով հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է գտնվում «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ թիվ ՍՑ-ՆԳ-2021/210 ընթացակարգը:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի (հետայսու նաև՝

Կարգ) 15-րդ կետի համաձայն՝ Անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը: Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը (անձինք), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը (անձինք)՝ եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին: ՀՀ պետական վերահսկողական ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և հասարակական կազմակերպությունների՝ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ ներգրավելու՝ Անձին ներկայացված գրավոր պահանջը ենթակա է բավարարման, իսկ նշված ժամկետից հետո նման պահանջ ներկայացվելու դեպքում վերջիններիս որպես կողմ ներգրավելու կամ մերժելու հարցը որոշում է Անձը:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին, ուստի գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ՍՑ-ՆԳ-2021/210 ընթացակարգի շրջանակներում «ԹԻՄ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՓԲԸ-ն Կարգի 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

Այսպիսով՝ գործի քննությամբ պայմանավորված՝ սեղմ ժամկետում անհրաժեշտություն է առաջացել տրամադրելու տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

Քանի՞ էլեկտրոնային հասցե է նշված «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից armeps էլեկտրոնային գնումների համակարգում:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պայմանագիր կնքելու ծանուցումն Ընկերության ո՞ր էլեկտրոնային հասցեին է ուղարկվել:

Նույն ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցումն Ընկերության ո՞ր էլեկտրոնային հասցեին է ուղարկվել:

Եթե armeps էլեկտրոնային գնումների համակարգում առկա է Ընկերության կողմից նշված երկու էլեկտրոնային հասցե, ապա դրանցից որևէ մեկի դադարեցումն իրականացվում է Ընկերության կողմից ինքնուրույն՝ ինքնաշխատ եղանակով, թե՝ ոչ»:

Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր թիվ ԲՔԱ-ԳՆ/1/13025-2021 գրության՝ տեղեկացնում ենք, որ armeps էլեկտրոնային գնումների համակարգում 04727286 ՀՎՀՀ-ով գրանցված է երիկու օգտատեր՝ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն և «Մ. Բուատ» ՍՊԸ-ն: ***<u>Ակտիվ օգտատերը «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն է, որին էլ կցված է m.buat@bk.ru էլ. փոստի հասցեն:</u>*** «Մ. Բուատ» ՍՊԸ-ն ակտիվ չէ և կցված չէ որևէ էլ. փոստի հասցե:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցումն ուղարկվել է m.buat@bk.ru էլ. փոստի հասցեին 12.06.2021 թվականին: Այլ տեղեկատվություն առկա չէ համակարգում:

Պայմանագրի կնքման ծանուցումը ուղարկվում է այն դեպքում, երբ մասնակցի կողմից պատասխանվել է պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցմանը:

Ինչ վերաբերվում է այն հարցին, թե արդյոք մասնակիցը կարող է փոփոխել գրանցված էլ. փոստի հասցեն, տեղեկացնում ենք, որ այո, մասնակիցը կարող է փոփոխել կամ դատարկ թողնել տվյալ դաշտը՝ ըստ իր հայեցողության»:

Այսպիսով՝ գործով առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 21.06.2021թ. ծանուցել է «Մ. Բուատ» ՍՊԸ-ի անվամբ mbuat@yandex.ru էլ. հասցեին, մինչդեռ, համաձայն «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի՝ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող ընկերության, 30.08.2021թ. գրության, «Մ. Բուատ» ՍՊԸ-ն ակտիվ չէ և վերջինիս կցված չէ որևէ էլ. փոստի հասցե, միևնույն ժամանակ գրության համաձայն՝ ակտիվ օգտատերը «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն է, որին էլ կցված է m.buat@bk.ru էլ. փոստի հասցեն:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, քանի որ

Ընկերությունը, ինչպես պարզվեց գործի քննության արդյունքում, «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի armeps համակարգում գրանցված էլ հասցեին՝ m.buat@bk.ru, չի ստացել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, որպիսի պայմաններում չի ստանձնել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները պատվիրատուին ներկայացնելու պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.07.2021թ. թիվ 26/26-111661-2021 գրությամբ «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**